# Միջադեպ այգում

**Հանթերը խոր շունչ քաշեց: «Ես չեմ օգտագործում նման բառեր»:**

**Դիանա Էվելին Նիլսոն**
(Հիմնված է իրական պատմության վրա)

*Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:*

Հանթերն իր ընկերների հետ վազում էր այգում: Նա կկոցեց աչքերը, երբ զգաց քամու սուլոցը: Նա շատ արագ էր վազում և իրեն շատ թեթև էր զգում:

Քայլին առաջինը դիպավ ցանկապատին: «Ես հաղթեցի»,- բղավեց նա:

Նրանից անմիջապես հետո ցանկապատին հասավ Հանթերը: «Արդար չէ: Դու առաջինն էիր սկսել»:

«Այո»,- ասաց Միգելը: «Եկեք մրցենք մինչև ծառը»:

Հանթերը նորից սկսեց վազել: Այս անգամ նա առաջինը դիպավ ծառին: Իսկ Միգելն անմիջապես հետևեց նրան:

«Ես հաղթեցի»,- ասաց Միգելը:

«Ոչ, Հանթերը հաղթեց», - ասաց Պիպերը:

«Այո», - ասաց Քայլին:

Միգելը ծալեց ձեռքերը: Ապա վատ բառ ասաց:

Տղաները ծիծաղեցին: Միգելը կրկնեց բառը, իսկ նրանք ավելի շատ ծիծաղեցին:

Հանթերը ներքուստ տխրեց: Նա գիտեր, որ լավ չէր նման բառ ասելը: Սակայն նա չէր ուզում, որ իրեն ծաղրեն: Նա ոչինչ չասաց:

Պիպերը մեկ այլ վատ բառ ասաց: Ապա Քայլին ասաց մեկ ուրիշը:

«Այժմ դու մի բան ասա, Հանթեր»,- ասաց Քայլին:

«Այո, ասա»,- պնդեց Միգելը: «Մի նոր հայհոյանք ասա»:

Հանթերը խորը շունչ քաշեց: «Ես չեմ օգտագործում նման բառեր»:

«Մի բառ ասելը քեզ չի վնասի»,- ասաց Քայլին:

«Ես չեմ ուզում», - ասաց Հանթերը:

«Շա՞տ ես վախենում», - ծիծաղեց Միգելը:

Հանթերը կարմրել էր: «Ես գնում եմ մեկ այլ տեղ խաղալու»:

Մնացած երեխաները շարունակեցին ծիծաղել և վատ բառեր ասել: Հանթերն ուզում էր հեռանալ: Այգին այլևս ուրախ չէր թվում: «Մինչև նոր հանդիպում», - փնթփնթաց նա:

Հանթերը ձեռքերը դրեց գրպանը և դանդաղ անցավ մնացած բոլոր երեխաների կողքով: Այլևս արագ չէր ընթանում և իրեն թեթև չէր զգում: Ծանրացած էր զգում իրեն:

Նա գտավ մայրիկին ու հայրիկին նստարանին նստած: Հայրը ցած դրեց գիրքը: «Լա՞վ ես»:

Հանթերը թոթվեց ուսերը: «Նրանք սկսեցին վատ բառեր ասել: Ես չէի ցանկանում անել դա, ուստի՝ հեռացա»:

Մայրիկը ժպտաց: «Դա համարձակ քայլ է»:

«Մենք հպարտ ենք քեզնով», - ասաց հայրիկը: «Դժվար է լավ ընտրություն կատարել, երբ մեզ շրջապատող մարդիկ այդպես չեն վարվում»:

Հանթերը հոգոց հանեց: Նա ուրախ էր, որ ճիշտ ընտրություն կատարեց, բայց դեռ լավ չէր զգում իրեն:

«Ուզո՞ւմ ես տուն գնալ», - հարցրեց մայրիկը:

Հանթերը մտածեց այդ մասին: «Դեռ ոչ», - ասաց նա: Նա նայեց երեխաների մեկ այլ խմբի, որոնք խաղում էին ճոպաններով: «Ես գնում եմ այնտեղ»:

Մինչ Հանթերը մոտենում էր, տղաներից մեկը ձեռքով արեց նրան: «Ողջույն, ես Դավիթն եմ»:

«Ես Հանթերն եմ: Կարո՞ղ եմ ցատկել ձեզ հետ»:

«Իհարկե»:

Հանթերը բռնեց ճոպանը և զգաց քամու սուլոցը: Մինչ նա խաղում էր Դավիթի և մյուսների հետ, արագ ընթանալիս նա կրկին թեթևություն զգաց: Նա արել էր այն, ինչը ճիշտ էր, չնայած դժվար էր: Նա ուրախ էր, որ լավ ընտրություն էր կատարել: ●

**Լավ ընտրություններ կատարելու մասին ավելին իմանալու համար կարդացեք Իմ ավետարանի չափանիշները ձեր *Երեխաների ուղեցույցի* հետնամասում:**

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՇՈՆ Ջ. ՔԵՆՆԵԴԻ

ՀԵՏԵՎԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ